ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 4

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 4»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Երևան - 2026

ՀՏԴ

ԳՄԴ

Ուսումնական նյութերի հարմարեցումներ: «Ես և շրջակա աշխարհը 4» աշխատանքային գիրք-տետրի մեթոդական ուղեցույց ուսուցչի համար / Մանուկյան Մ. Ռ., Պետրոսյան Ս. Ս., Օհանյան Հ. Վ.; Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն. – Եր.: Էդիթ Պրինտ, 2026. - 38 էջ:

Ձեռնարկը երաշխավորվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարի 13.02.2026 թվականի 219-Ա/2 հրամանով որպես ուսումնական նյութ:

Ձեռնարկը հրատարակության է երաշխավորվել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի խորհրդի կողմից:

Մասնագիտական խմբագիր՝ Մնացականյան Լ. Ա.

Հեղինակներ՝
Մանուկյան Մարինե Ռաֆիկի, մանկավարժական գիտությունների թեկնածու
Պետրոսյան Սյուզաննա Սամվելի
Օհանյան Հասմիկ Վրույրի

Գրախոսներ՝
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Հարությունյան Մ. Ռ.
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Ս. Վ.

Խմբագիր՝ Սարգսյան Հ. Ա.

Համակարգչային ձևավորում՝ Սարոյան Լ. Գ., Դավթյան Հ. Լ.

Սույն ձեռնարկի նպատակը հանրակրթական ուսումնական հաստատությունների չորրորդ դասարանի «Ես և շրջակա աշխարհը 4» աշխատանքային գիրք-տետրի կիրառության գործընթացում ուսուցիչներին մեթոդական աջակցության տրամադրումն է:

ISBN ՀՏԴ

ԳՄԴ

©Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, 2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 4
«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 4» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ
ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ.....11
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 36

ՆԱԽԱԲԱՆ

Հանրակրթության պետական նոր չափորոշչի համաձայն՝ «Ես և շրջակա աշխարհը» ուսումնական առարկան ԲՏՃՄ, «Հասարակական գիտություններ», «Ֆիզիկական կրթություն և անվտանգ կենսագործունեություն» և «Հայրենագիտություն» ուսումնական բնագավառները ներկայացնող միասնացված (ինտեգրված) պետական պարտադիր առարկա է 2-4-րդ դասարանների համար:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդումը տարրական դասարաններում հուսալի նախադրյալ է միջին և ավագ կրթական աստիճանների «Բնագիտություն», «Ես և իմ հայրենիքը», «Հասարակագիտություն» և այլ առարկաների, ինչպես նաև «Առողջ ապրելակերպ» միասնացված բովանդակային ուղղության համար:

Դասընթացը նպատակ ունի օգնել սովորողին ճանաչել իրեն ոչ միայն որպես անձ-անհատ, այլև որպես հասարակության և բնության անբաժանելի մասնիկ՝ նրա մեջ ձևավորելով պատկերացումներ բնության, դրա տարրերի միջև փոխազդեցության, հասարակության դերի, շրջապատող աշխարհի մասին:

«Ես և շրջակա աշխարհը» առարկայի դասավանդումը նպաստում է նաև սովորողների սոցիալականացմանը, ինքնաճանաչմանը, ինքնանդրադարձմանը, ինքնակազմակերպմանն ու ինքնադրսևորմանը:

Ծանոթանալով իրենց շրջապատող առարկաներին՝ սովորողներն սկսում են ավելի մեծ հետաքրքրությամբ ուսումնասիրել, ընդհանրացնել և վերլուծել բնության երևույթները: Այդ ամենն իր հերթին մարզում է սովորողի մտավոր ունակությունները, զարգացնում դիտողականությունն ու տրամաբանական մտածողությունը:

«Ես և շրջակա աշխարհը» առարկան լայն հնարավորություններ է ընձեռում սովորողներին իրենց շրջապատող իրականության՝ բնության և մարդկանց աշխատանքային գործունեության, կենսափորձի, առօրյայի վերաբերյալ գիտելիքներ կուտակելու, դրանք

հարստացնելու, համակարգելու և գործնական հմտությունների վերածելու համար:

Շատ կարևոր է, բնության տարրերի և երևույթների ուսումնասիրմանը զուգահեռ, սովորողին հնարավորության տալ զարգացնելու ճանաչողական կարողությունները՝ բնության մեջ, դասարանում կամ տանը **դիտումների, փորձերի** և տարաբնույթ այլ գործնական աշխատանքներ կատարելով, ապահովելով կենդանի շփումը բնության և մարդկանց հետ:

Պետք չէ մոռանալ, որ գործ ունենք կրտսեր դպրոցականի հետ, և անհրաժեշտ է նրան հնարավորություն տալ բնությանը, առարկաներին և երևույթներին ծանոթանալ նաև անմիջական շփման միջոցով, ուղղակիորեն: Դրանից հետո «բնություն» հասկացությունը նրանց համար դառնում է ավելի իրատեսական, ձեռք է բերում լայն իմաստ: Այս հարցում **դիտումները** եղել և մնում են անփոխարինելի միջոց, բնության շատ երևույթների մասին գիտելիքների առաջին աղբյուր:

Փորձը, փորձարարական աշխատանքները ևս նպաստում են տեսական նյութն ավելի լավ հասկանալուն՝ հնարավորություն տալով կրկնել ուսումնասիրվող երևույթը, դիտել այն մի քանի անգամ տարբեր պայմաններում, կամ հակառակը, դիտել երևույթը մի քանի անգամ՝ նույն պայմաններում: Արդյունքում սովորողներն ավելի արագ են կարողանում ինքնուրույն ուսումնասիրություններ կատարել:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք (այսուհետ՝ ԿԱՊԿ) ունեցող սովորողների համար պակաս կարևոր չէ նաև ուսումնական ֆիլմերի դիտումներ և դրանց շուրջ մատչելի, պարզ հարցադրումների օգնությամբ քննարկումներ կազմակերպելը: ՏՀՏ գործիքակազմի օգտագործումը դասագործընթացում հնարավորություն է ստեղծում ուսումնական նյութն ավելի դյուրամարս, տպավորիչ և դինամիկ դարձնել. ձայնային ընկալում, տեսաշարի

ցուցադրում երաժշտության ուղեկցությամբ, արագ փոխվող տեսարաններ, գունային ընկալում և այլն:

«Ես և շրջակա աշխարհը 4» աշխատանքային գիրք-տետրի բովանդակային նյութը խարսխված է «Ես», «Ես և մարդիկ», «Ես և բնությունը», «Ես և տիեզերքը» հիմնական գաղափարների վրա:

Սովորողը ծանոթանում է այդ հիմնական գաղափարների տրամաբանությունից բխող թեմաներին, կատարում սոցիալականացմանը նպաստող, իր առօրյան արտացոլող, իրական միջավայրից և իրողություններից բխող գործնական առաջադրանքներ՝ արդյունքում ձեռք բերելով որակներ, որոնք նրան պետք են և՛ իր առօրյա գործունեությունը կազմակերպելիս, և՛ ամբողջ կյանքի համար՝ օգնելով հնարավորինս արագ հարմարվել շրջապատին ու միջավայրին:

«Ես և շրջակա աշխարհը 4» աշխատանքային գիրք-տետրը մշակելիս առաջնորդվել ենք տարրական դպրոցի ծրագրի ավարտին հանրակրթության պետական նոր չափորոշչով սահմանված սովորողից ակնկալվող վերջնարդյունքների ապահովման պահանջով՝ դրանք հարմարեցնելով ԿԱՊԿ ունեցող սովորողների կարիքներին ու առանձնահատկություններին:

Ուսումնասիրելով հանրակրթական ուսումնական հաստատություններում գործող «Ես և շրջակա աշխարհը 4» երկու դասագրքերի բովանդակությունը՝ զետեղված ծրագրային նյութը պարզեցրել ենք և հարմարեցրել սովորողների կրթական կարիքներին:

Աշխատանքային գիրք-տետրն ընդգրկում է գիտելիքների այնպիսի շրջանակ, որն օգնում է սովորողին ճանաչել կյանքը սեփական դիտարկումների շնորհիվ, ինչպես նաև մեծացնում հետաքրքրությունը շրջապատող աշխարհի նկատմամբ՝ նպատակ հետապնդելով զարգացնել ու ակտիվացնել նրա մտածական գործընթացները, ուշադրությունն ու հիշողությունը:

Աշխատանքային գիրք-տետրն ընդգրկում է բազմաբնույթ և բազմաշերտ առաջադրանքներ (Ես-ի ճանաչում, իրավունքների և պարտականությունների գիտակցում, անձնական հիգիենայի իմացություն, օրվա ռեժիմի ճիշտ կազմակերպում, առողջության պահպանում, աղետներից պաշտպանվելու, բնությանն առնչվող թեմաներ և այլն): Դրանք հարմարեցված են այնպես, որպեսզի հնարավորինս օգնեն ուսման մեջ դժվարություններ ունեցող սովորողներին յուրացնել ուսումնական նյութն ու արդյունավետ կիրառել այն՝ նպատակ ունենալով նրանց մեջ սերմանել կարգապահություն, կարգ ու կանոնը պահպանելու սովորություն, կոկիկություն, պարտաճանաչություն, զարգացնել կամքի ուժ, գործը մինչև վերջ հասցնելու կարողություն և այլն:

Այս մոտեցման հիմնական սկզբունքն այն է, որ ուսուցիչը սովորողին դասագործընթացին ներգրավելու համար հենվի նրա անհատական կենսափորձի, սովորելու ոճի, հաշմանդամության վերաբերյալ անհրաժեշտ տեղեկության, սովորողի առանձնահատկությունների նկատմամբ հարգալից մոտեցման վրա:

Մեթոդական ուղեցույցում մանրամասնորեն ներկայացված են զետեղված առաջադրանքների մեթոդական մշակումները, որոնք կլինեն ուղենիշ առարկան դասավանդողների կամ աջակցություն կազմակերպողների համար՝ ուսումնական նյութը մատչելիորեն հաղորդելու, ուսման մեջ դժվարություն ունեցող սովորողների ուսումնառությունն առավել արդյունավետ կազմակերպելու, նրանց կարիքներից բխող օգնություն ցուցաբերելու համար:

Առաջադրանքների պահանջները ձևակերպված են կարճ, քայլերը՝ մանրամասնորեն մատնանշված: Դրանք բարդանում են աստիճանաբար. գիրք-տետրում հանդիպում ենք նույն առաջադրանքի ***ա, բ*** և որոշ դեպքերում՝ նաև ***գ*** կետերով ձևակերպված պահանջների:

Ընդգրկված առաջադրանքները հիմնված են ***ծանոթից անծանոթը*** դիդակտիկական սկզբունքի վրա: Դրանք կրում են

գործնական բնույթ և զուգակցվում Հավելվածից բերվող ռեսուրսները համապատասխան տեղերում փակցնելու կամ լրացնելու հանձնարարականներով: Նման մոտեցումն առաջացնում է հետաքրքրություն ուսումնական գործընթացի հանդեպ, սովորողին հնարավորություն է տալիս ակտիվորեն ներգրավվել դասագործընթացում՝ ներշնչելով ինքնավստահություն և հավատ սեփական ուժերի նկատմամբ:

Առաջադրանքների իրականացման շղթայում կարևոր բաղադրիչ է **անդրադարձը** հետադարձ կապի ապահովմամբ:

Առհասարակ, անդրադարձը դիտարկվում է որպես գործունեության և նրա արդյունքների վերլուծություն, ուստի այն կարելի է իրականացնել ոչ միայն ցանկացած առաջադրանքի, այլև ենթաթեմայի կամ թեմայի ավարտին:

Անդրադարձն ուղղված է գիտակցելու, հասկանալու անցած ճանապարհի յուրաքանչյուր քայլը: Անդրադարձի նպատակը սովորածի վերաբերյալ իմաստային շղթայի ստեղծումն է, կիրառված միջոցների, մեթոդների, ուսումնառության եղանակների, արդյունավետության մակարդակի չափումը:

Հատկապես կարևոր է հետադարձ կապի կիրառումը ԿԱՊԿ ունեցող սովորողի համար, քանի որ այդ դեպքում նրա հետ կազմակերպվող գործունեության հետագա քայլերն ավելի պարզորոշ ու նպատակային են դառնում, նպաստում ճիշտ, գրագետ պլանավորմանն ու գնահատմանը:

Այս նպատակով բովանդակային նյութը հաջորդիվ ներկայացված առաջադրանքներում պարբերաբար կրկնվում է՝ հնարավորություն տալով սովորողին կրկին անդրադառնալ դրան և ամրապնդել:

Դասը պլանավորելիս ուսուցիչը մշտապես ունենում է լրացուցիչ ուսումնական նյութեր ստեղծելու կամ դրանք սովորողների ամենատարբեր կարիքներին հարմարեցնելու կարիք: Աշխատանքային գիրք-տետրում ներառված առաջադրանքներն

օգնում են ուսուցչին այդ հարցում. նա կարող է դրանք կիրարկել ըստ սովորողների կարիքների և ընդունակությունների:

Նշենք, որ առաջադրանքների կատարման համար ժամկետներ չեն նախատեսվում (սովորողն ինքն է թելադրում իր աշխատաժամանակը, որը կարող է խիստ տարբեր լինել՝ պայմանավորված ԿԱՊԿ ունեցող սովորողի անհատական կարիքներով և առանձնահատկություններով), սակայն հարկավոր է պահպանել առաջադրանքների շարունակականությունը՝ սահմանված վերջնարդյունքներն ապահովելու համար:

Դրանց ծանրակշիռ մասը վերաբերում է սովորողների ինքնաճանաչմանը և սոցիալական պարզագույն հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը, նրանց կենսակերպն ու առօրյան առողջ և անվտանգ կազմակերպելուն:

«Ես և շրջակա աշխարհը 4» աշխատանքային գիրք-տետրում առաջադրանքներին կից կան **թեմատիկ նկարներ**, որոնք առաջադրանքներն ավելի պատկերավոր և ակնառու են դարձնում սովորողի համար, ինչպես նաև նպաստում դրանք պարզաբանելուն, ավելի զննական դարձնելուն, ուսուցանվող նյութի համակողմանի ընկալմանը, խոսքի, մտածողության, գեղագիտական ճաշակի զարգացմանը և ունեն դաստիարակչական ներգործություն:

Նկարների դիտման արդյունավետությունն ապահովելու համար կարելի է փոքրիկ զրույց անցկացնել, որի նպատակը պետք է լինի սովորողների աշխատանքին որոշակի ուղղվածության հաղորդումը և առաջադրված նկարը ճիշտ և բազմակողմանիորեն ըմբռնելու համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Հարկ է սովորողներին ուղղորդել մանրամասնորեն դիտել նկարները, անվանել այն առարկաները, որոնց հանդիպել են առօրյայում, ցույց տալ դրանց միջոցով կատարվող գործողությունները, գիտակցել այդ իրերի կիրառման անհրաժեշտությունը՝ արդյունքում

տիրապետելով միջավայրում հարմարվելու և ապրելու սոցիալական պարզագույն կանոնների:

Աշխատանքային գիրք-տետրում կարևորել ենք նաև **շփման-հաղորդակցության** դերը՝ շեշտադրելով այն առանձնահատկությունները, որոնք հաղորդակցական սահուն գործունեության միջոցով ապահովում են բառապաշարի հարստացում, բառերի հետ աշխատանք, լսելու, ըմբռնելու կարողության և հմտության ձևավորում (տե՛ս QR ծածկագրերը):

Կան նաև **ինտեգրված** առաջադրանքներ, որոնք համալիր մոտեցում են ապահովում ուսումնասիրվող առարկաների շրջանակում (մայրենի, մաթեմատիկա, կերպարվեստ, տեխնոլոգիա): Այս նպատակին են միտված աշխատանքային գիրք-տետրում զետեղված որոշ առաջադրանքներ, որոնք օգնում են ճանաչել սեփական անձը, հաղորդակցվել տարեկիցների հետ՝ ապահովելով տարբեր կարողունակությունների ձևավորմանն ուղղված վերջնարդյունքներ՝ նպաստելով 21-րդ դարի հմտությունների ձեռքբերմանն ու հասարակական կյանքում դրանց ներառմանը:

Խորհուրդ ենք տալիս ուսուցչին հարմարման գործընթացը հետևողականորեն իրականացնել հետևյալ սկզբունքների հաշվառմամբ՝ հնարավորինս կիրառելով ուսումնառության համընդհանուր դիզայնի սկզբունքները.

- նյութը ներկայացնել բազմազան միջոցների օգտագործմամբ՝ տեսա/ձայնագրություններ, զննական առարկաներ և պատկերներ,
- հնարավորություն տալ սովորողին տարբեր ձևաչափերով ցուցադրել գիտելիքներն ու հմտությունները (գրավոր, բանավոր, պատկերները ցույց տալով, գործնական քայլերով),
- հնարավորություն տալ ինքնադրսևորվել հնարավոր տարբեր միջոցներով,

– խթանել սովորողների մասնակցությունը դասագործընթացին բազմազան գործողությունների միջոցով:

Առարկայի հարմարեցումը տարբեր առանձնահատկություններ ունեցող սովորողների կրթական կարիքներին հնարավորություն կտա վերջիններիս բարելավել ֆիզիկական ակտիվությունն ու առողջությունը (cf. Gray et al., 2015; Kondo, Fluehr, McKeon, & Branas, 2018; Müller et al., 2017; Twohig-Bennett & Jones, 2018), զարգացնել հոգեկան բարձրագույն գործընթացները (cf. Dadvand et al., 2015; Schutte, Torquati, & Beattie, 2017), ինչպես նաև նպաստել սոցիալիուզական հմտությունների ձևավորմանը, մասնավորապես՝ հույզերի կարգավորմանն ու սոցիալական հմտությունների ամրապնդմանը (cf. Bang, Kim, Song, Kang, & Jeong, 2018; Tillmann, Tobin, Avison, & Gilliland, 2018):

Կարևոր է հասնել այն գիտակցմանը, որ ամեն երեխա կարող է սովորել, եթե գտնում է իր ուսուցչին:

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 4» ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

«Ես» խորագրի ներքո զետեղված առաջադրանքները վերաբերում են անցածի կրկնությանը՝ ապահովելով ուսումնական նյութի շարունակականությունն ու դրա ամրապնդումը:

1-ին առաջադրանքի միջոցով սովորողն անդրադառնում է իրեն՝ նշելով անձնական տվյալները (անուն, ազգանուն, տարիք և այլն) և նախասիրությունների շրջանակը: Դժվարությունների դեպքում կարելի է հուշող հարցեր տալ, ինչպես նաև առաջարկել ներկել պատկերները նախընտած գույներով:

2-րդ առաջադրանքը նրան տեղափոխում է դպրոց/դասարան, որտեղ նա փորձում է կռահել ***պայուսակի*** ու ***գրքի*** մասին հանելուկների պատասխանները: Առաջադրանքը դյուրացնելու նպատակով սովորողին կարելի է առաջարկել հանելուկների պատասխանները գտնել՝ միացնելով ուրվագծերը և ստանալով համապատասխան պատկերները:

Խորհուրդ է տրվում զրույց վարել դպրոցական պարագաների ու դրանց նշանակության շուրջ՝ մատնանշելով այն առարկաները, որոնք այդ պահին նրա ձեռքի տակ են: Նյութի ամրապնդման նպատակով կարելի է առաջարկել նաև համադրել առարկաները պատկերների հետ:

3-րդ առաջադրանքում սովորողը լրացնում է անավարտ նախադասությունները: Անհրաժեշտության դեպքում կարող է նաև բանավոր պատասխանել հարցերին:

4-րդ առաջադրանքը ենթադրում է սովորողի հետ զրույց իր ընտանիքի մասին:

Ուղղորդող հարցեր.

- Քանի՞ մարդ է ապրում ձեր ընտանիքում:
- Այստեղ ցո՛ւյց տուր ընտանիքիդ անդամների թիվը (սեղանին դնել թվեր, որոնցից սովորողը կընտրի իրեն անհրաժեշտ թիվը):
- Թվի՛ր ձեր ընտանիքի անդամներին:

Սովորողին հնարավորություն է տրվում նաև համապատասխան նկարի կողքին գրել ընտանիքի անդամների անունները: Հարկ է նշել, որ անունները գրվում են մեծատառով:

Սովորողի ուշադրությունը հրավիրում ենք գիրք-տետրի **5-րդ առաջադրանքի վրա,** որը վերաբերում է ընկերությանը:

Առաջարկվում է վերականգնել ասացվածքը: Սովորողը *Հավելվածից* բերում-փակցնում է թվերին համապատասխան բառերը

և կարդում ստացված նախադասությունը՝ «**Ծառն ամուր է արմատներով, մարդը՝ ընկերներով»:**

Ցանկալի է ցույց տալ որևէ ծառի նկար, որտեղ տեսանելի են արմատները: Բացատրել, որ ծառը սնվում, աճում է այդ արմատների օգնությամբ: Մարդը նույնպես չի կարող ապրել միայնակ, առանց հարազատների, բարեկամների ու ընկերների: Նա նրանց կարիքը միշտ ունի, նրանցով է ուժեղ ու պաշտպանված: Դժվարության դեպքում կարող ենք հուշել, որ նախ՝ առաջնորդվի թվերի հերթականությամբ և ապա՝ կարդա տեքստն ու մեկնաբանի:

6-րդ առաջադրանքում սովորողը դիտում է նկարները: *Հավելվածից* բերում և յուրաքանչյուր նկարի տակ փակցնում է համապատասխան նախադասությունը:

Ցանկալի է, որ կա՛մ ինքը, կա՛մ ուսուցիչը բարձրաձայն կարդան ստացված նախադասությունները՝ մատը դնելով նկարների վրա: Այնուհետև սովորողը նշում է այն նկարները, որոնցում «գտնում է» իր ընկերներից որևէ մեկին:

7-րդ առաջադրանքում, օգտվելով ***Հավելվածի*** բառահումքից, սովորողը նկարագրում է իր ընկերոջը՝ փակցնելով բառերը «մարդուկի» մոդելի վրա:

Ցանկալի է, որ փակցնելուց հետո սովորողը բարձրաձայն կարդա այդ բառերը:

«Ես ապահով եմ» ենթաթեման անդրադառնում է առողջ սննդի հիմնական բաղադրիչներին, օրվա սննդակարգին, բուսական և կենդանական սննդի մասին տեղեկատվությանը՝ բացատրելով, որ առողջ սնունդն է մարմնի աճի և զարգացման հիմնական գործոնը, ինչպես նաև եռանդի, ֆիզիկական ակտիվության աղբյուրը, օգնում է սովորողին գիտակցել, թե ինչ վտանգներ կարող են հանդիպել տանը,

դպրոցում ու փողոցում, բնության գրկում, և ինչպես կողմնորոշվել արտակարգ իրավիճակներում:

Մի փոքրիկ պարբերույթով ներկայացվում է, որ սնունդն ու ջուրն ապահովում են մարդու մարմնի աճն ու առողջությունը, որի պահպանման համար անհրաժեշտ են մրգերի և բանջարեղենի մեջ եղած վիտամինները:

Նշենք, որ աշխատանքային գիրք-տետրում պարբերաբար հանդիպում են փոքրիկ տեսական նյութեր, որոնց ընթերցումը պարտադիր չէ սովորողի համար:

Դրանց կարող է ծանոթանալ ուսուցիչը/սովորողին աջակցողը, որը տեղեկույթը մատչելի կբացատրի՝ հաշվի առնելով սովորողի կարիքն ու առանձնահատկությունը:

Նմանօրինակ տեղեկույթն ամփոփված է կանաչ ուղղանկյունների մեջ:

8-11-րդ առաջադրանքները կատարելիս սովորողն ամփոփում է իր գիտելիքներն առողջ սնվելու, ինչպես նաև օրվա ռեժիմի մասին, քայլ առ քայլ մշակում օրվա կանոնակարգը՝ նշելով այն օգտակար սննդամթերքը, որն ապահովում է առողջ կենսակերպ:

Այդ առաջադրանքներից հետո առաջարկվում են մի քանի ընդհանրական խորհուրդներ, որոնց սովորողը պետք է հետամուտ լինի իր օրվա կանոնակարգում:

12-րդ առաջադրանքը նպատակ ունի սովորողին ծանոթացնել սեղանից օգտվելու վարվեցողության կանոններին՝ նրա մեջ դաստիարակելով համապատասխան վարքագիծ և ամրապնդելով այն:

Հարկավոր է սովորողի հետ մանրամասն դիտել նկարը՝ նրան տալով հետևյալ ուղղորդող հարցերը, մասնավորապես՝

– Որտե՞ղ են երեխաները (դպրոցի ճաշարանում):

– Մինչև սեղանի շուրջը նստելը ի՞նչ պետք է անեն երեխաները (լվացվեն):
– Ի՞նչ են անում երեխաները (ճաշում են):
– Ասա՝ ի՞նչ են ուտում:
– Անուններ տուր երեխաներին:
– Ասա՝ ով ինչ է անում:
– Ո՞ւմ արարքն ես հավանում:
– Ու՞մ արարքը չես հավանում:

Դրվագային նկարների կողքին սովորողը պետք է դնի՝ «+» կամ «–» նշանները՝ իր վերաբերմունքն արտահայտելու համար:

13-րդ առաջադրանքի կատարումն ապահովում է միջառարկայական կապ մաթեմատիկայի հետ, քանի որ սովորողը բանջարեղենի պատկերներն ամբողջացնելու համար ընտրում է համապատասխան երկրաչափական պատկերները:

Կարելի է նախապես անվանել բանջարեղենը (գազար, տաքդեղ, սմբուկ, սունկ, դդում, կաղամբ), հետո՝ երկրաչափական պատկերները՝ (շրջան, եռանկյուն, քառակուսի, հնգանկյուն, սեղան, քառակուսի), ապա համադրել պատկերները: Հընթացս կարելի է զրույց վարել այն մասին, որ օրինակ՝ «Սմբուկի պատկերն ամբողջացավ, երբ տեղադրեցինք քառակուսի պատկերը», և այդպես շարունակ:

14-րդ առաջադրանքը նախատեսում է կարդալ/լսել փոքրիկ բանաստեղծություն այգու մասին: Բանաստեղծության ուսուցումը նպատակ ունի ներկայացնել մարդու հանրօգուտ աշխատանքը, բարիք ստեղծելու նրա առաքելությունը, բնությանը ներդաշնակ լինելը, բնության բարիքներից օգտվելը, համերաշխ աշխատելը միասին ինչ-որ բան անելու, ինչպես նաև յուրաքանչյուրն իր գործն անելու պարագայում:

Սովորողը ծանոթանում է աշխատանքային գործիքներին՝ ծանոթանալով նրանց կիրառական նշանակությանը՝ ինչն ինչի համար պետք է օգտագործել: Հնարավորության դեպքում կարող ենք համապատասխան տեսանյութ ցուցադրել՝ ընկալումն ամրապնդելու նպատակով:

Հարկ է սովորողին հաղորդել այն գիտակցումը, որ առողջ սնունդն ստանում ենք բնությունից, և որ ինքը պարտավոր է հոգ տանել այդ բնության մասին:

15-րդ առաջադրանքը նախատեսում է *Հավելվածից* ընտրել - բերել այն նկար-բառերը, որոնք առողջ սնունդ են ենթադրում, և փակցնելու միջոցով այդ «մթերքները» «տեղավորի» էկո պայուսակում:

Այս առաջադրանքը կարելի է կատարել որպես գործնական աշխատանք՝ կազմակերպելով «Խանութ-խանութ» խաղը:

Դիդակտիկ նյութերի օգնությամբ սովորողները կզարգացնեն նախ՝ ճանաչողական գիտելիքները, ապա նաև՝ սոցիալական հմտությունները՝ գիտելիքը դարձնելով ավելի կենսունակ՝ կապելով այն իրենց կյանքի և առօրյայի հետ:

16-րդ առաջադրանքը

Օգտվելով նկարներից՝ սովորողը ծանոթանում է Արայի օրվա ռեժիմին՝ համեմատելով իր օրվա հետ:

Հնարավորության դեպքում ցույց տալ օրվա ռեժիմում պատկերված գործողությունները (արթնանում է, լվացվում է, խոզանակով մաքրում է ատամները, գնում է դպրոց և այլն):

17-րդ առաջադրանքը հնարավորություն է տալիս նկարների փոխարեն բառերը տեղադրել՝ ամբողջացնելով տեքստը: Արդյունքում պատկերացում է կազմում «ռեժիմային պահերի» մասին:

18-րդ առաջադրանքին հնարավորության դեպքում կարելի է գործնական բնույթ հաղորդել:

Նախապես բարձրաձայնել նախատեսվող բոլոր մթերքների անունները, որոնք անհրաժեշտ են աղցան պատրաստելու համար: Ցանկալի է ցույց տալ դրանց նկարները, թեկուզև՝ հեռախոսով:

Այնուհետև նշել այն մթերքները, որոնք անհրաժեշտ են աղցան պատրաստելու համար: Կարելի է սովորողի հետ միասին քննարկել՝ հաշվի առնելով նրա նախասիրությունները:

Հաջորդիվ գրում ենք բաղադրատոմսը՝ օգտվելով նշված մթերքների ցանկից:

Գրելու կարողության բացակայության դեպքում կարելի է բարձրաձայն ներկայացնել՝ շեշտադրված արտաբերելով/ կրկնելով այն մթերքների անունները, որոնք օգտագործել ենք մեր աղցանում, ինչպես նաև ցույց տալ այն գործողությունները, որոնք անհրաժեշտ են աղցան պատրաստելու համար:

Խորհուրդ է տրվում սովորողի հետ կրկնել յուրաքանչյուր գործողություն սկզբից մինչև վերջ (ինչի՞ց սկսեցինք, ո՞ւր հասանք)՝ հնարավորություն տալով ամրապնդել ուտեստը պատրաստելու քայլաշարը, որպեսզի այն հետագայում վերածվի տվյալ ուտեստը պատրաստելու գործնական կարողության:

Այս առաջադրանքն օգնում է նրան նաև սպասքից օգտվել ըստ անհրաժեշտության:

19-22-րդ առաջադրանքները վերաբերում են անվտանգության կանոններին: Այս նյութերի շրջանակում սովորողներն աշխատել են նաև երրորդ դասարանում, ուստի այն ուսումնական նյութի յուրօրինակ կրկնություն է:

Դիտելով նկարները՝ սովորողը կարողանում է դիտարկել տարբեր իրավիճակներ (տուն, բակ, փողոց), որոնք կարող են վտանգավոր լինել նրա կյանքի համար:

Միևնույն ժամանակ տեսնում է նկարներ, դիտարկում իրավիճակներ, երբ ինքն անվտանգ է և ապահով:

23-24-րդ առաջադրանքները վերաբերում են լավ ու վատ սովորություններին:

Սովորողը *Հավելվածից* բերում-փակցնում է նկարները համապատասխան սյունակներում: Այնուհետև կարելի է զրույց անցկացնել սովորողի հետ յուրաքանչյուր նկարի բովանդակության շուրջ, օրինակ՝ պետք է ժամանակին քնել, զբաղվել մարմնամարզությամբ, չի կարելի եղունգները կրծել և այլն:

25-րդ առաջադրանքն ամփոփում է բոլոր առաջադրանքների կատարման ընթացքում սովորածը՝ հնարավորություն տալով սովորողին ստեղծել պաստառ:

Պաստառի վրա նշված թվանշանների տակ սովորողը կփակցնի համապատասխան նկարները՝ կանոնները մշտապես աչքի առաջ ունենալու համար:

«Ես և մարդիկ» ենթաթեման նպատակ ունի ընդլայնել սովորողի գիտելիքները Հայաստանի պետական խորհրդանշանների, բնաշխարհի, քաղաքների և գյուղերի, բնակիչների, պատմության, հայտնի մարդկանց և հերոսների մասին, ձևավորել սեր և պատասխանատվություն սեփական հայրենիքի հանդեպ՝ նպաստելով հայի ինքնության ձևավորմանը:

26-րդ առաջադրանքում զետեղված բանաստեղծությունը հայրենիքի մասին է:

Ուղղորդող հարցեր՝

– Թվիր՝ ում է նշում հեղինակն իր բանաստեղծության մեջ (հայրիկ, մայրիկ):

– Ասա՝ ինչը կարող է լինել մարդուն շատ հարազատ (դպրոց, բակ, այգի, փողոց):
– Ի՞նչ մեկ բառով կփոխարինես այս բոլոր բառերը միասին (հայրենիք):
– Ի՞նչ տեսարժան վայրեր են նշվում բանաստեղծության մեջ:
– Ասա՛ դրանցից յուրաքանչյուրի անունը և ցո՛ւյց տուր համապատասխան նկարը:
– Ո՞րն էր քեզ ծանոթ, որտե՞ղ ես եղել:

27-28-րդ առաջադրանքներում սովորողը ծանոթանում է Հայաստանի Հանրապետության քարտեզին և պետական խորհրդանշաններին (զինանշան, դրոշ, օրհներգ):

Ցանկալի է, որ սովորողը սրանք տեսնի իր միջավայրում (զինանշան, դրոշ) և լսի պետական օրհներգի ձայնագրությունը: Կարևոր է սովորողի մեջ ձևավորել օրհներգը լսելիս ոտքի կանգնելու մշակույթը:

29-30-րդ առաջադրանքներում սովորողը գործնական աշխատանքների միջոցով ամրապնդում է իր գիտելիքները, մասնավորապես, գունավորում է դրոշը, ստեղծում է իր «անձնագիրը»:

31-րդ առաջադրանքում սովորողը նկարազարդում է շրջանները և փակցնում էջում:

32-րդ առաջադրանքում ամբողջացնում է Հայաստանի քարտեզը *Հավելվածից* բերած պատկերներով: Ամբողջացնելուց հետո ցանկալի է, որ սովորողը կարդա պատկերների (մարզերի) անունները՝ նշելով, թե ինքը որ մարզում է ապրում:

33-րդ առաջադրանքում լուսանկարների և դրանց ներքո տրված կարճ տեղեկատվության միջոցով սովորողը ճանաչում է հայ նշանավոր մարդկանց, ինչեցնում նրանց անունները:

Կարելի է նաև լրացուցիչ հարցեր տալ.

– Որտե՞ղ է տեսել նրանց արձանները:
– Թումանյանի ո՞ր հեքիաթն է լսել:

34-35-րդ առաջադրանքներում սովորողը դիտարկում է իրավիճակներ, որոնք բնորոշ են օրինապահ կամ օրինազանց քաղաքացիներին՝ անպայմանորեն նշելով, որ նա, ով սիրում է իր երկիրը, միշտ խնամքով է վերաբերվում իր շրջապատին:

Հավելվածից բերում է օրինակելի քաղաքացուն բնութագրող բառեր և փակցնում արդեն իրեն ծանոթ «մարդուկի» մեջ:

Կարելի է հետ գնալ և համեմատել այն «ընկեր-մարդուկի» մոդելի հետ: Ի՞նչ բառերով էինք բնութագրել նրան, ի՞նչ բառերով՝ «քաղաքացի-մարդուկին»: Ի՞նչն է նրանց համար ընդհանուր:

36-րդ առաջադրանքում սովորողը ծանոթանում է Հայաստանի խորհրդանիշներին (ծիրան, դուդուկ, նուռ)՝ բացառելով մյուս պատկերները (Իտալիայի դրոշ, Էյֆելյան աշտարակ):

37-րդ առաջադրանքում սովորողը նշում է, թե որտեղ է ինքն ապրում՝ հնարավորություն ունենալով տարբերակել քաղաքը գյուղից: Որպես հուշում՝ կարելի է ուղղորդող հարցեր տալ, օրինակ՝ «Քո բնակավայրում բարձր շենքե՞ր են, թե՞ այգիներ ու դաշտեր»:

38-րդ առաջադրանքում սովորողը *Հավելվածից* բերում-փակցնում է Հայաստանի տեսարժան վայրերի նկարները, անվանում դրանք:

Ցանկալի է նաև հնարավորության դեպքում կազմակերպել էքսկուրսիա՝ ապահովելով տեսողական-զգայական ընկալում կամ ցուցադրել կարճ տեսանյութեր:

39-րդ առաջադրանքում սովորողն ինքնուրույն ստանում է պաստառ՝ ամբողջացնելով գիտելիքները Հայաստանի/ծննդավայրի մասին: Գրելու դժվարության դեպքում կարող է դատարկ վանդակներում սիմվոլիկ նկարներ նկարել:

40-րդ առաջադրանքում սովորողը կարող է ստանալ իր քաղաքի/գյուղի նկարն իր պատկերացմամբ: Կարելի է նաև նրա հետ միասին համացանցից ընտրել իրենց քաղաքին/գյուղին համապատասխան նկարներ, տեսարժան որևէ վայր ու փակցնել էջում կամ արտանկարել: Այնուհետև հարցերի օգնությամբ վերարտադրել տվյալ նկարի բովանդակությունը:

Աշխատանքը կարելի է կատարել նաև բջջային հեռախոսի օգնությամբ, մասնավորապես, սովորողն իր ծնողի հետ միասին կարող է լուսանկարել այն, ինչը հետաքրքրություն է առաջացնում, տպել այդ նկարը, փակցնել էջում և պատմել, թե ինչու է ընտրել այդ նկարը, ինչ զգացողություններ է այն առաջացնում իր մեջ:

41-րդ առաջադրանքը վերաբերում է թղթադրամների և մետաղադրամների ճանաչմանը:

Ցանկալի է կապ ստեղծել մաթեմատիկայի հետ՝ ձևակերպելով համապատասխան հարցադրումներ, օրինակ՝ քանի՞ հատ 1000 դրամանոց կա 5000 դրամի մեջ, քանի՞ հատ 5000 դրամ է պետք 10000 ունենալու համար, որքա՞ն կլինի 2 հատ 2000 դրամը, երեք հատը...

Կարելի է նշել նաև, թե ո՛ր հայտնիների նկարներն են պատկերված թղթադրամների վրա, մասնավորապես՝ Վիլյամ

Սարոյան /5000 դրամանոց/, Տիգրան Պետրոսյան /2000 դրամանոց/, Պարույր Սևակ/ 1000դրամանոց/, Կոմիտաս/10000 դրամանոց/:

Հնարավորության դեպքում կարելի է կիրառել թղթադրամների խաղային տարբերակները՝ պատկերվածների հետ համադրելու համար, մետաղադրամների դեպքում կարելի է կիրառել իրական մետաղադրամներ:

42-րդ առաջադրանքի նպատակն է գաղափար տալ անձնական բյուջեի մասին: Նախ՝ ներկայացնում ենք, թե ինչ է խնայատուփը (սովորաբար երեխաների կողմից օգտագործվող մետաղադրամների տարա, որն այս դեպքում հանդես է գալիս որպես «սովորական բանկ»):

Խնայատուփի օգտագործումը երեխաներին սովորեցնում է խնայողություններ անել և նպատակային ծախսել այդ խնայողությունները:

Կարելի է երեխաներին հնարավորություն տալ կավից պատրաստել իրենց սեփական խնայատուփը, կամ խնդրել ծնողներին՝ այդ գործը կազմակերպել ինքնուրույն: Քանի որ նախ՝ իրենց պատրաստածն ավելի սիրով են օգտագործում և դա լրացուցիչ մոտիվացիա է, երկրորդ՝ կավի հետ շփումն օգտակար է (տե՛ս՝ կավաթերապիա):

«Ես և մարդիկ» (փոխհարաբերություններ) ենթաթեման ուղղված է օգնելու սովորողին գիտակցել իրավունքների և պարտականությունների փոխկապվածությունը՝ բացատրելով, որ իրավունքները պաշտպանելու և իրացնելու ձևերից մեկը ուրիշների իրավունքները չխախտելն է և պարտավորությունները կատարելը: Օգնել գիտակցելու, որ աշխարհը հարուստ է բազմազանությամբ, և տարբեր լինելը չի կարող խտրականության պատճառ դառնալ:

43-44-րդ առաջադրանքներում սովորողը դիտում է նկարները, համապատասխան նշանով («+» կամ «-») արտահայտում իր վերաբերմունքը երեխաների արարքների հանդեպ: Ընկալումը դյուրին դարձնելու համար կարելի է պատմել կարճ պատմություններ՝ ներառելով զգայական նկարագրություն, օրինակ՝ «Անին շատ ջղային էր, քանի որ ընկերուհին իրեն չէր տալիս իր սիրելի տիկնիկը»:

45-րդ առաջադրանքի նպատակն է օգնել սովորողին գիտակցել իր իրավունքներն ու պարտականությունները:

Սովորողը նախ «կարդում է» աղյուսակը: Հարկ է, որ նա բարձրաձայն արտաբերի «Ես ունեմ» կառույցով արտահայտություններ՝ հասնելով ունենալու գաղափարի ըմբռնմանը: Կարելի է նրան առաջարկել թվել, թե ինչ ունի առհասարակ (տուն, հագուստ, ընկեր, խաղալիք, հայրիկ, մայրիկ և այլն):

Այնուհետև նրա ուշադրությունը կենտրոնացնել մյուս երկու բառերի վրա՝ **իրավունքներ** և **պարտականություններ:**

Ցույց ենք տալիս **Հավելվածի** նկարները և զրույցի միջոցով օգնում սովորողին դրանք փակցնել համապատասխան սյունակներում: Հընթացս բարձրաձայնում ենք յուրաքանչյուր նկարի բովանդակությունը, մասնավորապես.

- Երեխաները դասարանում են:Նրանք սովորում են:
- Երեխաները բժշկի մոտ են գնում, որ առողջ լինեն:
- Երեխաները խաղում են:
- Պետք է մաքուր պահել ձեռքերը, որ առողջ լինենք:
- Պետք է աղբը գցել աղբամանի մեջ:
- Պետք է ճիշտ անցնել փողոցը, որ մեր կյանքին վտանգ չսպառնա:

Այնուհետև սովորողը *Հավելվածից* բերում է նախադասության պատրաստի կաղապարները, կարդում ինքնուրույն (կամ ուսուցիչն է

կարդում) և փակցնում դրանք պաստառի վրա կամ տետրում՝ դրա համար հատկացված մասում:

46-րդ առաջադրանքում տրված է չորս նկար, որտեղ պատկերված են տարբեր ազգությունների երեխաներ: Սովորողը *Հավելվածից* բերում-փակցնում է համապատասխան բառերը (ամերիկացի, չին, հնդիկ, արաբ): Դժվարության դեպքում կարելի է խոսքային հուշումներ կիրառել:

Այստեղ շատ կարևոր է շեշտել, որ չնայած այս երեխաները պատկանում են տարբեր ազգությունների, սակայն նրանք կարող են շատ լավ ընկերներ լինել:

47-րդ առաջադրանքը ենթադրում է տրված պատկերի ամբողջացում. սովորողը *Հավելվածից* բերում և Երկիր մոլորակի պատկերի շուրջը փակցնում է տարբեր ազգությունների երեխաների նկարները: Այս առաջադրանքում հնարավորություն ենք տալիս սովորողին անվանել կամ գրել նկարներին համապատասխան ազգությունների անվանումները: Կարող են օգտվել նախորդ առաջադրանքի գրառումներից՝ ավելացնելով ևս երկուսը՝ ռուս և իսպանացի:

48-րդ առաջադրանքում սովորողը պատկերում է տարբեր ազգությունների մարդկանց առնվազն երկու դիմակ՝ օգտվելով տրված օրինակներից:

Կարող է պատրաստել նաև տարբեր ազգությունների դեմքերով ստվարաթղթե դիմակներ և դրանք օգտագործել դերային խաղերի ժամանակ: Եթե նկարելը դժվար է, կարելի է թույլատրել գունավորել պատրաստի դիմակները, կտրել-փակցնել ձևերը:

«**Ես և բնությունը**» ենթաթեման հնարավորություն է տալիս սովորողին իմանալ մեր մոլորակի բնության բազմազանության մասին,

ծանոթանալ բնության բաղադրամասերին, դրանց փոխազդեցությանն ու փոխկապակցվածությանը:

49-րդ առաջադրանք: Կենտրոնում գրված է ***բնություն*** բառը: Սովորողը *Հավելվածից* պետք է բերի **արև, հող, լեռ, դաշտ, ծով, գետ, բույս, կենդանի, մարդ պատկերող** նկարները և փակցնի՝ պատկերացում կազմելով իրեն շրջապատող բնական միջավայրի մասին, որը հենց Երկիր մոլորակի բնությունն է:

Հետամուտ լինել, որ սովորողն անպայման նախ՝ անվանի դրանք, ապա նոր միայն փակցնի: Այնուհետև *Հավելվածից* պետք է բերի ***արև, հող, լեռ, դաշտ, ծով, գետ, բույս, կենդանի, մարդ*** բառերը և փակցնի համապատասխան նկարների տակ:

Ցանկալի է, որ կարդալու դժվարություն չունեցող սովորողը կարդա այդ բառերը՝ մտովի դրանք զուգորդելով համապատասխան նկարների հետ, հարստացնելով առարկայական բառապաշարը:

50-րդ առաջադրանքն ուղղորդում է սովորողին ճանաչելու բնությունը՝ դիտարկելով նրանում տեղի ունեցող փոփոխությունները: Իսկ այն լավ ճանաչելու համար խորհուրդ է տրվում կազմակերպել աշխատանքներ բնության գրկում: Սա լայն հնարավորություն է տեղում դիտարկել եղանակային փոփոխությունները, բույսերի ու կենդանիների վարքը, ծանոթանալ մարդկանց գործունեությանը:

Կարելի է ձեռքի տակ ունենալ նախապես մշակված քայլաշար /փոքր քայլերով/, որին սովորողը կծանոթանա մինչև դիտումներ իրականացնելը:

Բացօթյա դիտումներն իրականացնելուց հետո կարելի է դասարանում խոսել արդյունքների մասին, դրանք քննարկել, գրառել (եթե գրելու հետ կապված դժվարություններ չկան):

Խորհուրդ ենք տալիս ունենալ **բնության օրագիր,** որտեղ սովորողը կնկարի (կգրառի) իր տպավորությունները (դիտման արդյունքները):

Ցանկալի է տարվա ընթացքում տարվա եղանակների թվին համապատասխան կազմակերպել առնվազն չորս դիտում. աշնան դիտումները՝ հոկտեմբեր ամսվա վերջին, ձմռանը՝ հունվար, գարնանը՝ ապրիլ, իսկ ամռանը՝ հուլիս ամիսներին:

Ներկայացնենք դիտումներ իրականացնելու քայլաշար, որով ուսուցիչը կարող է առաջնորդվել:

Դիտումներ աշնանը

1. Ինչպիսի՞ եղանակ է այդ օրը:
2. Ինչպիսի՞ն է երկինքը:
3. Ինչպե՞ս է լուսավորում արևը:
4. Քամո՞տ է, թե՞ անհողմ/երբ քամի չի փչում/: Քամու ուժը՝ թույլ, ուժեղ:
5. Ե՞րբ է ավելի տաք՝ ամռա՞նը, թե՞ հիմա:
6. Օրը շո՞ւտ է մթնում:
7. Դիտի՛ր ծառը. ինչպե՞ս է այն փոխվել ամռան համեմատ:
8. Ինչպե՞ս է փոխվել ծառերի գունավորումը:
9. Ի՞նչ է փոխվել թռչունների կյանքում. ո՞ր թռչուններն են չվել, որո՞նք են մնացել ձմեռելու:
10. Ինչպե՞ս են հագնվում մարդիկ ամռան համեմատ: Ինչո՞ւ:

51-րդ առաջադրանքը նպատակ ունի բնության բաղադրամասերի մեջ հատուկ ուշադրության արժանացնել մարդուն՝ որպես բնության մի մասնիկի, և նրա գործունեությանը բնությունը պահպանելու գործում: Եթե երեխան դժվարանում է նկարագրել, կարող ենք ինքներս նկարագրել իրավիճակը և առաջարկել, որ ցույց տա համապատասխան պատկերը:

52-րդ առաջադրանքում ամրապնդվում են բնության բաղադրամասերի վերաբերյալ ունեցած գիտելիքները՝ յուրաքանչյուր բառը սլաքով միացնելով համապատասխան նկարին: Դժվարության դեպքում կարելի է կետագծեր անել, որպեսզի աշակերտը կարողանա բառը միացնել պատկերին:

53-րդ առաջադրանքում սովորողն ամրապնդում է կենդանի և անկենդան բնության մասին ունեցած գիտելիքները: Առաջադրանքը կատարելիս աչքի առաջ ունենալ կանաչ ուղղանկյան գրառումը՝ սովորողին պարբերաբար հիշեցնելով, որ, օրինակ՝ արևն անկենդան է, որովհետև չի շնչում, իսկ կատուն, ծաղիկը կենդանի բնություն են, որովհետև շնչում են: Ցանկալի է, որ սովորողը ինքնուրույն ասի 1-2 օրինակ:

54-55-րդ առաջադրանքներում սովորողին մեկ անգամ ևս հիշեցնում ենք, թե ինչ է անհրաժեշտ բույսին աճելու համար, և բույսերն ու կենդանիները ինչպես են սնունդ ստանում: Կարող ենք առաջարկել, որ օրինակ բերի իր կենսափորձից, իսկ դժվարության դեպքում կարող ենք մեր կենսափորձից օրինակներ բերել և/կամ տեսանյութեր ցուցադրել:

56-57-րդ առաջադրանքներում սովորողը պետք է ուրվապատկերներով կռահի, թե ինչ է պատկերված, և անվանի դրանք (ոզնի, թիթեռ, նապաստակ, սոխ, կրիա, գազար): Այուհետև *Հավելվածից* բերում-փակցնում է դրանց ընդհանուր անվանումը՝ **կենդանի բնություն,** մյուս տարբերակում՝ **անկենդան բնություն:**

58-րդ առաջադրանքում սովորողը մոդելավորման միջոցով ծանոթանում է **ձվից հավի** ծնվելու փուլերին: Ընդհանրացնում ենք, որ բոլոր կենդանի օրգանիզմները բազմանում են և առաջացնում իրենց

նման սերունդ. հավից՝ հավ, կովից՝ կով, արծվից՝ արծիվ, մարդուց՝ մարդ և այլն: Սովորողը կարող է շարքը լրացնել ևս երկու օրինակով: Եթե նկատում ենք, որ առաջադրանքը կատարելիս սովորողը շատ է դժվարանում, կարող ենք *Հավելվածից* բերվող պատկերները համարակալել:

59-րդ առաջադրանքում ներկայացված սննդի շղթաների միջոցով բացատրել, որ մարդը և կենդանիները սնվում են բույսերով կամ այլ կենդանիներով:

Սովորողը նկարների միջոցով դիտարկում է, որ ծառն իր արմատներով հողից ստանում է սննդարար նյութեր, արևից՝ ջերմություն: Կարմիր սլաքի ուղղությունը սովորողին հուշում է, որ հավը ուտում է որդ, թրթուրը՝ տերև, կովը՝ խոտ:

60-րդ առաջադրանքում սովորողի հետ միասին մշակում ենք բնությունը պահպանելու վերաբերյալ կանոններ՝ դրանք ներկայացնելով պայմանանշաններով:

Սովորողների հետ կարելի է մշակել նաև բնության մեջ գտնվելու վարքի կանոններ՝

- Բնությունը քո ընկերն է: Այն օգնում է քեզ ապրել առողջ:
- Բնության գրկում պիտի լինես ուշադիր, որպեսզի շատ հետաքրքիր բաներ տեսնես, և լուռ՝ բնության ձայներին ականջալուր լինելու համար:
- Անտառում խարույկ վառել խորհուրդ չի տրվում, եթե քեզ հետ չկան մեծահասակներ:
- Խարույկ վառեք միայն հին խարույկի տեղում և հետո խնամքով հանգցրե՛ք կրակը:
- Մի՛ կոտրիր ծառերի ճյուղերը:
- Մի՛ քանդիր մրջնանոցները:

– Բնե՛ր պատրաստիր / մեծերի օգնությամբ/ թռչունների համար:
– Կերակրի՛ր ձմեռող թռչուններին:
– Մի՛ աղտոտիր բնությունը: Մաքո՛ւր պահիր, որպեսզի քեզնից հետո այլ մարդիկ ևս կարողանան վայելել բնությունը:

Այս կարգախոսների մասին միանգամից պետք չէ խոսել և կամ թվարկելով անցնել: Հարկ է դրանց անդրադառնալ առանձին-առանձին՝ համապատասխան օրինակներ բերելով, համապատասխան գործողությունները (հնարավորության դեպքում) ցույց տալով:

61-65-րդ առաջադրանքները վերաբերում են սնկերին: Սովորողին ընդհանուր գաղափար ենք տալիս սնկերի մասին, օգնում տարբերակել **ուտելի** և **թունավոր** սնկերը:

Նկարների օգնությամբ սովորողը ճանաչում է սնկերի տրված տեսակները, գիտակցում, որ թունավոր սնկերը պոկել չի կարելի:

Հարկավոր է սովորողին կենտրոնացնել երկրորդ նկարի վրա /շամպինիոն/, որը շատ է հանդիպում սուպերմարկետներում և իրեն ծանոթ է:

Խորհուրդ ենք տալիս կարդալ նաև հետևյալ զվարճալի պատմությունը սնկերի մասին:

Վազող սնկեր

Անտառում ոզնին սնկեր էր հավաքել իր ձագուկների համար և պատրաստվում էր տուն վերադառնալ: Հանկարծ լսեց մարդկանց ձայներ: Ոզնին արագ թաքնվեց թփերի տակ: Անտառում սունկ էին հավաքում Լևոնն ու Կարոն: Հանկարծ նրանք թփի տակ տեսան մեծ քանակությամբ տարբեր սնկեր: Երեխաներն ուրախացած թուփը բարձրացրին ու զարմանքից ապշեցին: Սնկերն սկսեցին արագ վազել:

Ա՜յ քեզ բան, տղաները երբեք վազող սունկ չէին տեսել: Իսկ ոզնին, սնկերը շալակին, բարեհաջող տուն հասավ:

66-րդ առաջադրանքում սովորողը պիցայի նկարի վրա «ավելացնում է կտրտած շամպինիոն»՝ իր համար պարզելով դրա ուտելի լինելն ու սննդի մեջ օգտագործելու հանգամանքը:

67-68 առաջադրանքները վերաբերում են ջրին՝ բնության մեջ ամենատարածված նյութին:

67-րդ առաջադրանքում գծակարգի միջոցով ակնառուացնում ենք ջրի և ցամաքի հարաբերակցությունը. շագանակագույնով ներկված է ցամաքային, իսկ կապույտով՝ ջրային տարածքը: Հարկ է սովորողի համար տեսանելի դարձնել այն, որ կապույտ տարածությունը մեծ է, ուրեմն ջրային տարածքն ավելի շատ տեղ է զբաղեցնում Երկրի վրա, քան ցամաքը:

68-րդ առաջադրանքում վարդի օրինակով ներկայացնում ենք, որ երբ ծաղիկը, բույսը ջրում ենք, այն թարմ է մնում: Այդպիսով ապահովում ենք նրա աճը: Եվ հակառակը՝ առանց ջրի վարդը թոշնում է:

Հիմնավորում ենք, որ ջուրը շատ կարևոր է և՛ բույսերի, և՛ կենդանիների, և՛ մարդկանց համար:

69-րդ առաջադրանքում սովորողն իմանում է, որ ջուր կա անձրևի, ձյան, ամպերի մեջ: *Հավելվածից* բերում-փակցնում է բառերը համապատասխան նկարների տակ: Ցանկալի է, որ կարդալու դժվարություն չունեցող սովորողը կարդա այդ բառերը՝ մտովի զուգորդելով դրանք համապատասխան նկարների հետ, հարստացնելով առարկայական բառապաշարը:

Մինչև ջրի երեք վիճակներին ծանոթացնելը առաջարկում ենք գուշակել հանելուկը: Այն տրվում է որպես լրացուցիչ նյութ, որին ուսուցիչը կարող է անդրադառնալ՝ հաշվի առնելով սովորողի առանձնահատկությունը:

Սովորողը կարող է հանելուկի պատասխանը գտնել կից նկարում:

Ներկայացված նկարների միջոցով նա ծանոթանում է ջրի երեք վիճակներին:

Բնության երևույթների մասին գիտելիքները ձեռք են բերվում նաև փորձերի միջոցով, որը հիանալի միջոց է սովորողի համար տեսական նյութն ավելի դյուրին դարձնելու համար:

«Մեկ փորձն արժե հազար բառ»: Ուրեմն արի՛ փորձ կատարենք:

70-րդ առաջադրանքում զետեղված աշխատանքն օգնում է, որպեսզի սովորողը դիտարկի, թե ինչպես է ջրի հեղուկ վիճակը փոխվում պինդ վիճակի:

Առաջարկում ենք կատարել նաև հետևյալ փորձը՝ գործնականում ծանոթանալով ջրի վիճակների հետ:

«Ջուրն ընդարձակվում է»

Պլաստիկե շիշը կիսով չափ լցնում ենք ջրով: Ջրի մակարդակը նշում ենք գունավոր թաղքագրչով: Շիշը ուղղահայաց դիրքով դնում ենք սառցախցիկի մեջ, կամ եթե ձմեռ է, կարելի է հանել և որոշ ժամանակ թողնել դրսում: Երբ շշի ջուրը սառչի, այն պետք է հանել սառցախցիկից /կամ տուն բերել/ և ուշադրություն դարձնել, թե ինչքան է բարձրացել սառած ջուրը:

Պարզվում է, որ սառած ջուրն ընդարձակվում է, և ջրի ծավալը մեծանում է:

71-րդ առաջադրանքում նշվում են ջրի հատկությունները: Սովորողը *Հավելվածից* բերում-փակցնում է **անգույն, անհամ, անհոտ, թափանցիկ, հոսուն** բառերը:

72-րդ առաջադրանքի միջոցով ներկայացնում ենք, թե ինչպես կարելի է տարբերել մաքուր ջուրը աղտոտվածից:

Ցանկալի է, որ կարդալու դժվարություն չունեցող սովորողը կարդա այդ բառերը՝ մտովի զուգորդելով դրանք համապատասխան նկարների հետ, հարստացնելով առարկայական բառապաշարը գործնական :

Կարելի է 1-2 փորձի միջոցով ցույց տալ, թե ինչպես է մաքուր ջուրը պղտորվում, երբ նրան խառնում են ավազ (հող): Հնարավորություն տալ սովորողին դիտարկել և համեմատել՝ որն է մաքուր ջուր, որը՝ պղտոր:

Կարելի է կատարել նաև ջրի մաքրման 1-2 փորձ. ջրի մեջ ավազ լցնել, ֆիլտրելով մաքրել: Ջրի մեջ հող լցնել, թողնել՝ նստվածքն առանձնանա, վրայից վերցված ջուրը ֆիլտրել: Եթե լրիվ չմաքրվի՝ ջուրը պղտոր մնա, հետո կարելի է եռացնել:

73-րդ առաջադրանքի նպատակն է սովորողի ուշադրությունը հրավիրել շատ կարևոր խնդրի վրա, այն է՝ ջրի խնայողությունը:

Կարելի է այս առաջադրանքը կապել խնայատուփի (անձնական բյուջե) առաջադրանքի հետ՝ նրան բացատրելով, որ խնայատուփը կարող է լցվել, եթե ինքը խնայի ջուրը (Ջրի համար մենք վճարում ենք դրամով: Եթե չթողնես՝ ջուրն անտեղի հոսի, այդ գումարը կտնտեսես ու կգցես խնայատուփիդ մեջ):

«Ես և տիեզերքը» ենթաթեմայի նպատակն է սովորողին ծանոթացնել մեզ շրջապատող իրերին, կենդանի օրգանիզմներին, որոնց մեկ բառով կոչում ենք **մարմին,** և նյութերին:

Մարմիններ են քարը, ծառը, տունը, միջատը, մետաղալարը և այլն:

Մարմինները կազմված են նյութերից:

Ձմռան սկզբին, երբ դեռ ձյուն չկա, առավոտյան խոտի վրա սպիտակ շերտ է գոյանում: Նայում ես՝ ձյուն չի եկել, բայց խոտն սպիտակ է: Դա եղյամն է, որը կազմված է ջրից, իսկ ջուրը նյութ է:

Քանի որ ջուրը բոլորին քաջածանոթ է, և մենք առօրյայում ամեն օր օգտագործում ենք ջուր, ուստի նյութ հասկացությունն ընկալելի դարձնելու ամենադյուրին ճանապարհը այն ջրի հետ կապելն է:

74-րդ առաջադրանքը կատարելու արդյունքում սովորողն իմանում է, որ յուրաքանչյուր մարմին ունի որոշակի ձև, զանգված ու տարողություն (ծավալ):

74-րդ առաջադրանքի *գ* կետի պահանջը կարելի է կատարել հետևյալ կերպ՝ սովորողին հնարավորություն տալ տեղում էլեկտրոնային կշեռքով կշռվել, արդյունքը գրանցել և կարդալ: Կարևոր է, որ նա իրեն ճանաչի նաև այդ կողմով: Եթե նկատում եք ավելորդ քաշի առկայություն, կարելի է նրբանկատորեն խոսել ճիշտ սննդակարգի, առողջ սննդի և ֆիզիկական ակտիվության մասին:

Առաջարկում ենք կատարել նաև հետևյալ փորձը՝ գործնականում ծանոթանալով մարմնի զանգվածին:

«Ծանր-թեթև»

Ընտրեք տարբեր զանգվածներ ունեցող իրեր: Օրինակ՝ պլաստմասե խաղալիք, փոքրիկ գնդակ, փափուկ խաղալիք և այլն:

Առաջարկե՛ք երեխային վերցնել այդ իրերը, ձեռքով ծանրութեթև անել և որոշել, թե որն է ծանր, որը՝ թեթև: Ապա փորձը կարելի է շարունակել՝ այդ իրերը նետելով՝

– հատակին և լսելով, թե ինչպիսի ձայն է գալիս մակերևույթից,

- ջրի մեջ՝ ուշադրություն դարձնելով դուրս ցայտող շիթերին,
- ավազի մեջ՝ ուշադրություն դարձնելով հարվածից առաջացած փոսիկին:

Կարելի է խաղալ նաև հետևյալ խաղը. երեխան փակում է աչքերը, իսկ ուսուցիչը իրը նետում է, օրինակ՝ հատակին: Երեխան պետք է գուշակի՝ նետած իրը ծա՞նր էր, թե՞ թեթև:

76-րդ առաջադրանքում սովորողը դիտում է նկարները, անվանում և նշում, թե որ մարմինը ինչ նյութից է**:**

77-րդ առաջադրանքը կատարելով՝ սովորողը պատկերացում է ձևավորում այն մասին, որ մարմինները կազմված են նյութերից, որոնք լինում են պինդ, հեղուկ և գազային:

79-83-րդ առաջադրանքները վերաբերում են տիեզերական մարմիններին:

79-րդ առաջադրանքում սովորողն ուշադիր դիտում է նկարները և անվանում տիեզերական մարմինները:

80-րդ առաջադրանքում նա *Հավելվածից* բերում-փակցնում է ութ մոլորակների անունները և կարդում դրանք:

81-րդ առաջադրանքում լրացնում է բաց թողած բառը (**երրորդ)** և կարդում ստացված նախադասությունը:

82-րդ առաջադրանքում սովորողը լրացնում է բաց թողած բառը (**Արեգակ)** և կարդում ստացված նախադասությունը:

83-րդ առաջադրանքի տեսանյութը, ըստ որի՝ Երկիրը պտտվում է Արեգակի շուրջը և այդպես առաջանում են տարվա եղանակները, սովորողը դիտում է, հետո լրացնում բաց թողած բառերը, կամ *Հավելվածից* գտնում է համապատասխան բառերը (գարուն, ամառ, աշուն, ձմեռ) և բերում-փակցնում իր տեղում:

84-րդ առաջադրանքի տեսանյութը, ըստ որի՝ Երկիրը պտտվում է իր առանցքի շուրջը, և այդպես առաջանում է գիշեր-ցերեկ հերթափոխը, սովորողը դիտում է, հետո լրացնում բաց թողած բառերը կամ *Հավելվածից* բերում-փակցնում է համապատասխան բառերը (գիշեր, ցերեկ**):**

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ս. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Ա. Ադամյան, Հ. Վ. Օհանյան (2022), Արդյունավետ հարմարեցումներ, որակյալ կրթություն: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար/Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, Հայաստան, 142 էջ:
2. Ա. Հ. Սվաջյան, Թ. Յու. Ազատյան, Լ. Ս. Բաբայան, Է. Ռ. Թադևոսյան, Մ. Ռ. Հարությունյան, Ա. Տ. Մանուկյան, Ս. Վ. Մուրադյան, Հ. Վ. Օհանյան (2023) Մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների նկարագիրը կրթության կազմակերպման գործընթացում: Մեթոդական ուղեցույց: Ձեռնարկ մանկավարժների համար/ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն, Երևան, Հայաստան, 148 էջ:
3. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 2-4-րդ դասարանների առարկայական չափորոշիչ (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 28-Ն հրաման)
4. «Ես և շրջակա աշխարհը» առարկայի 4-րդ դասարանի առարկայական ծրագիր (ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի N 50-Ն հրաման)
5. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 4-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Ա. Հովսեփյան և ուրիշներ), «ՄԱՆՄԱՐ» հրատարակչություն, Երևան-2022:
6. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 4-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Լ. Ալեքսանյան, Ն. Թորոսյան), «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան-2022:
7. Լ. Ալեքսանյան, «Ես և շրջակա աշխարհը»: Ուսուցչի ձեռնարկ, 2023:

8. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 4-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Գ. Հովհաննիսյան և ուրիշներ), «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան-2025:
9. «Ես և շրջակա աշխարհը» մեթոդական ուղեցույց (հեղինակ՝ Գ. Հովհաննիսյան), «Աստղիկ գրատուն» հրատարակչություն, Երևան-2023:
10. «Ես և շրջակա աշխարհը» դասագիրք 4-րդ դասարանի համար (հեղինակներ՝ Ն. Պողոսյան, Կ. Մարգարյան), Երևան-2025:
11. Լ. Ալեքսանյան և ուր. «Ուսումնական նյութեր», 2023:
12. Bang K.-S., Kim S., Song M.K., Kang K.I., Jeong Y. The effects of a health promotion program using urban forests and nursing student mentors on the perceived and psychological health of elementary school children in vulnerable populations. International Journal of Environmental Research and Public Health. 2018;15(9):1977. doi: 10.3390/ijerph15091977.
13. Gray C., Gibbons R., Larouche R., Sandseter E.B.H., Bienenstock A., Brussoni M., et al. What is the relationship between outdoor time and physical activity, sedentary behaviour, and physical fitness in children? A systematic review. International Journal of Environmental Research and Public Health. 2015;12(6):6455–6474. doi: 10.3390/ijerph120606455. [DOI] [PMC free article] [PubMed] [Google Scholar]
14. Greig A., Taylor J., MacKay T. Sage; Thousand Oaks, CA: 2013. Doing research with children: A practical guide. [Google Scholar]
15. Gitune.com

Մանուկյան Մ. Ռ., Պետրոսյան Ս.Ս., Օհանյան Հ.Վ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԱՐՄԱՐԵՑՈՒՄՆԵՐ

«ԵՍ ԵՎ ՇՐՋԱԿԱ ԱՇԽԱՐՀԸ 4»

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳԻՐՔ-ՏԵՏՐԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱՐ

Տպագրությունը՝ օֆսեթ: Տպաքանակը՝ 70:
Տպագրված է «Էդիթ Պրինտ» հրատարակչությունում:
Երևան, Դ.Մալյան 43